



«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական  
կենտրոն

*Պարտադիր կուլտակային կենսաթոշակային  
համակարգի ներդրման հնարավոր ազդեցությունները  
ՀՀ-ում*

«Գյումրի» 2014

## **Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման հնարավոր ազդեցությունները ՀՀ-ում**

Հայաստանում պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգում ընդգրկված է աշխատունակ 15-40 տարեկան զբաղվածություն ունեցող բնակչության այն հատվածը, որը փաստացի գրանցված է համապատասխան ձեռնարկություններում եւ հաստատություններում, եւ իր աշխատավարձից որոշակի գումար է հատկացնում կենսաթոշակային կուտակային հիմնադրամներին՝ այն ակնկալիքով, որ կենսաթոշակի անցնելուց հետո պետության կողմից իրեն հատկացվող կենսաթոշակից բացի լրացուցիչ կստանա նաեւ կուտակված կենսաթոշակային գումարը: Չնայած մեր հանրապետությունում «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքը ընդունվել է 2010թ-ին, և 2011թ-ից գործել է կամավոր կենսաթոշակային բաղադրիչը, սակայն, ըստ էության, որևէ մեկը կամավոր գումար չի փոխանցել կուտակային հիմնադրամներին: Այդ ինստիտուտը, երեք տարիների ընթացքում մեր հանրապետությունում չի կայացել: Պատճառները մի քանիսն են, որոնցից կարելի է առանձնացնել, ժողովրդի կողմից այդ համակարգին նկատմամբ անվստահությունը, աշխատունակ բնակչության զգալի հատվածի մոտ եկամտի եւ աշխատավարձի ցածր մակարդակը:

Կուտակային կենսաթոշակների մասին ՀՀ օրենքի համաձայն 2014թ. հունվարի մեկից ուժի մեջ է մտնում պարտադիր կուտակային բաղադրիչը, ըստ որի 1974թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված յուրաքանչյուր վարձու աշխատող իր ամսական անվանական աշխատավարձի 5%-ը պարտավոր է կուտակել՝ փոխանցելով կենսաթոշակային հիմնադրամներին: Պարտադիր բաղադրիչը վերաբերելու է 270 հազար 15-40 տարեկան Հայաստանի աշխատունակ բնակչությանը: 2012թ. ընթացիկ տվյալներով մեր հանրապետությունում 15-40 տարեկան բնակչության թիվը 1388,9 հազ. (679,9 հազարը տղամարդ, 709 հազարը՝ կին) է<sup>1</sup>: Այսինքն՝ կենսաթոշակային հիմնադրամին գումար չպետք է փոխանցեն 1118,9 հազ. մարդ, որը կազմում է տվյալ տարիքային խմբի բնակչության 80,6%-ը, ինչը բավականին բարձր ցուցանիշ է: Նրանց զգալի հատվածը գյուղաբնակներ, գործազուրկներ, սեզոնային արտազնա աշխատանքի մեկնողներ եւ սովերում գտնվող աշխատողներն են:

Այդ առումով մոտավոր տվյալներով մոտ կես միլիոն 15-40 տարեկան օբյեկտիվորեն չեն մուծելու այդ կուտակային հիմնադրամին: Նշենք, որ գյուղաբնակների եւ կուտակային հիմնադրամին մուծողների թիվը կազմում է մոտ 770 հազար մարդ: Բերված թվերից պարզ է դառնում, որ 618,9 հազար բնակչության մասը ծառայում են բանակում, մյուս հատվածը սեզոնային արտազնա աշխատանքի կամ մշտապես այլ երկրներ են մեկնել բնակության, գործազուրկներ եւ սովերային տնտեսությունում զբաղվածներն են: **Վերոնշյալ հաշվարկների հիման վրա կարելի է հանգել հետևյալ կարևորագույն հարցադրմանը՝ ինչքանով է համակարգը լուծելու**

<sup>1</sup> Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Եր. 2013թ, էջ 43

**բարեկեցության խնդիրը, եթե դրան մասնակցելու են մոտավոր հաշվարկներով 15-40 տարեկան քաղաքացիների միայն 20%-ը, իսկ մնացած 80%-ը չի օգտվելու համակարգի կողմից ապահովվող բարձր կենսաթոշակներից:**

Այժմ ներկայացնենք ՀՀ Կառավարության կողմից որպես կենսաթոշակային կուտակային համակարգի փորձ մատնանշվող երկրների՝ Չիլիի, Պերուի եւ Էստոնիայի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական մի քանի ցուցանիշներ: Փաստենք, որ դրանք ՀՀ հետ համեմատությամբ տարբեր միջավայրում ձևավորված ազգեր են, որոնք տարբերվում են միմյանցից կրոնով, պատմությունով, էթնիկական հոգեբանությամբ, նյութական եւ հոգեւոր արժեքներով, աշխատանքի մշակույթով, աշխարհաքաղաքական հայեցակարգերով: Այսինքն, ՀՀ-ն որեւէ ընդհանրություն չունի այդ երկրների հետ: Բացի դրանից թվակված երկրները գտնվում են սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակի վրա քան մեր հանրապետությունը: Տարբեր է նաեւ ժողովրդագրական իրապայմանները, ինչը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

**Կուտակային կենսաթոշակին անցած երկրներից մի քանիսի մակրոտնտեսական ցուցանիշները XXI դ. սկիզբ<sup>2</sup>**

Երկիր	Բնակչ. թիվ Մլն. մարդ	1000 մարդու հաշվով Բնական աճ	Ուրբանիզացման մակարդակը %	Կյանքի տևողություն	60 եւ բարձր տարիք %	1 շնչի հաշվ. ՀՆԱ ԱՄՆ դոլարով
1	2	3	4	5	6	7
Հայաստան	3,2	3,0	63,0	72	11,2	3500
Էստոնիա	1,3	-0,3	69,0	79	22	12000
Չիլի	16,6	10,0	88,0	79	12	10000
Պերու	27,9	15,0	73,0	71	8	7900

Աղյուսակ 1-ից երևում է, որ մեկ շնչի հաշվով համախառն արդյունքի ծավալով ամենավերջին տեղում Հայաստանն է: Բացի դրանից այդ երկրներում ամսական միջին աշխատավարձը տատանվում է 1000-2000 դոլարի սահմաններում, իսկ մեզ մոտ 300-ը չի գերազանցում: **Բերված թվերն խոսում են այն մասին, որ մեր հանրապետությունն ոչ մի սոցիալ-տնտեսական ընդհանրություն չունի այդ երկրների հետ: Իսկ այդ հանգամանքը շատ կարևոր է հաշվի առնել, երբ անցնում է կատարվում կենսաթոշակային կուտակային համակարգին:**

<sup>2</sup> Աղյուսակը կազմելիս օգտագործել ենք թվարկված պետությունների վիճակագրական տարեգրքերը:

Կուտակային կենսաթոշակային համակարգին անցնելիս, կարելուովում է նաև բնակչության թվի փոփոխության կանխատեսումը մոտակա 15-20 տարիների ընթացքում: Հաշվի առնելով այդ դրույթը փորձել ենք կանխատեսել, թե տասը տարի անց մեր հանրապետության բնակչության թիվը եւ տարիքային կազմի ինչպիսի փոփոխության կարող է ենթարկվել: Թե ինչպիսին է եղել Հայաստանի հանրապետության ժողովրդագրական պատկերն անցյալում, ներկայում եւ ինչպիսին կարող է լինել ապագայում ներկայացված է աղյուսակ 2-ում :

Աղյուսակ 2

**ՀՀ բնակչության թվի եւ տարիքային կազմի շարժընթացը  
1979-2025թթ. /հազարմարդ/**

	1979թ.		1989թ.		2001թ.		2011թ.		2025թ.	
	մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%
Ամբողջ բնակչությունը	3037,2	100	3304,7	100	3213,0	100	3262,6	100	2135,6	100
Այդ թվում մինչև 15 տարեկան	940,0	31,0	1002,8	30,3	779,7	24,2	639,4	19,5	552,3	25,8
15-64	1917,9	63,1	2129,3	64,4	2121,2	66,0	2247,1	68,8	1083,4	50,7
65 եւ բարձր	179,3	5,9	172,6	5,3	312,1	9,8	376,1	11,7	499,9	23,5

Աղյուսակից երևում է, որ մեր հանրապետության բնակչության տարիքային կառուցվածքում վերջին 35 տարիների ընթացքում, մասնավորապես 1990-ական թվականներից սկսած տեղի են ունեցել որակական եւ քանակական փոփոխություններ: Աստիճանաբար ավելացել է աշխատունակ եւ կենսաթոշակային տարիքի բնակչության բացարձակ թիվը եւ տեսակարար կշիռը, իսկ մինչ աշխատունակ տարիքին՝ ընդհակառակը անկում է գրանցվել: Այսինքն, այդ տարիներին տեղի է ունեցել բնակչության ծերացում եւ կենսաթոշակատուների թվի աճ: Չխորանալով ժողովրդագրական այդպիսի իրապայմանների առաջացման մեջ, նշենք, որ ծնունդների թվի նվազման գլխավոր պատճառներից մեկը 20-րդ դարի վերջից սկիզբ առած ազգաբնակչության զանգվածային արտագաղթն է: Իսկ մեր մոտավոր հաշվարկով 2025թ. մեր հանրապետությունում ազգաբնակչության կեսը կկազմի աշխատունակ բնակչությունը, իսկ 1/4-ը՝ կենսաթոշակատուները: **Նշենք, որ 2025թ. հետո ընկած ժամանակահատվածում կենսաթոշակատուների տեսակարար կշիռն անընդհատ բարձրանալու է, իսկ 40 տարեկան պարտադիր կուտակային կենսաթոշակային վճար մուծողները իրենց կենսաթոշակը (կենսաթոշակային տարիքը չբարձրացնելու դեպքում) կստանան 2037թ-ից: Եթե նշված տարում**

**ժողովրդագրական ներկա միտումները պահպանվեն, ապա մեր հանրապետության բնակչության 1/3-ից ավելին կամ շուրջ 500 հազ.-ը կկազմեն կենսաթոշակատուները:**

Ստորև կատարենք նաև կուտակային կենսաթոշակային համակարգի որոշակի քանակական վերլուծություններ և կանխատեսումներ: 2013թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին ըստ ԱՎԾ տվյալների<sup>3</sup> Հայաստանում միջին անվանական աշխատավարձը կազմել է 146 952 ՀՀ դրամ: Եթե սա ընդունենք որպես մեր հետագա հաշվարկների հիմք, ապա պարտադիր կուտակային վճարը այս աշխատավարձի դեպքում կկազմի 7348 դրամ, իսկ եկամտային հարկի /36228 ՀՀդրամ/ և պարտադիր կուտակային վճարի պահումից հետո իրական տնօրինվող եկամուտը կկազմի 103317 դրամ: **Փաստորեն պարտադիր բաղադրիչը իրականում կազմում է հարկումից հետո մնացած միջին գուտ աշխատավարձի 6,63 %-ը:** Այս թիվը տարբեր է՝ կախված հաշվարկային աշխատավարձի չափից, և կարող է հասնել ընդհուպ մինչև 13 տոկոսի, սակայն այն միշտ ավելին է, քան 5 տոկոսը, ինչը խեղաթյուրում է պարտադիր բաղադրիչի տնտեսագիտական բովանդակությունը, քանի որ փաստորեն մասնակիցը կուտակային հատկացում է կատարում նաև իր հարկվող, այն է՝ չտնօրինվող եկամտի դիմաց:

ՀՀ տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը 2012թ. կազմել է միջինը 1418,3 հազար մարդ, որոնցից 663,2 հազարը վարձու աշխատողներ են: Ըստ նախնական կանխատեսումների՝ մոտ 270 000 վարձու աշխատողներ դառնալու են պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակիցներ: Միջին աշխատավարձի հաշվարկով, ինչպես արդեն վերևում նշել էինք, կուտակային վճարը կազմում է 7348 դրամ, իսկ դա նշանակում է, որ կենսաթոշակային ֆոնդերին վարձու աշխատողների կատարած վճարը հաջորդ տարի կլինի ոչ պակաս, քան 23 807, 5 մլն դրամ: Իրականում այս գումարը կլինի մի փոքր ավելի, 500000-ից բարձր աշխատավարձ ստացող պարտադիր կուտակային համակարգի մասնակիցների՝ իրենց հաշվարկային եկամուտներից վճարված 5%-ից ավելի վճարի չափով:

ՀՀ 2013թ. պետական բյուջեում սոցիալական պաշտպանությանը ուղղված ծախսերը կազմում էին 304696,8 մլն դրամ, իսկ ահա 2014թ. պետական բյուջեում նախատեսվում է սոցիալական պաշտպանությանը ուղղված միջոցների աճ՝ մինչև 362030,6 մլն դրամ: Հավելյալ մոտ 20 մլրդը նախատեսված է կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ուղղությամբ, իսկ մնացած գումարը, ըստ էության, հենց այն գումարն է, որով պետությունը հատկացումներ է կատարելու կենսաթոշակային ֆոնդերին բնակչության վճարներին գուգահեռ: Փաստորեն, առաջիկա տարիների ընթացքում պարտադիր կենսաթոշակային վճարները լրացուցիչ ծախսային բեռ են դառնալու ոչ միայն վարձու աշխատողների, այլ նաև պետական բյուջեի վրա: Ընդ որում, պետական բյուջեի դեպքում այս ծախսերը տարեցտարի աճելու են, քանի որ 1974թ.-ի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված վարձու աշխատողների թիվը տարեցտարի

<sup>3</sup> ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվար-հոկտեմբերին, Մակրոտնտեսական ցուցանիշներ, ԱՎԾ, 2013թ. [http://armstat.am/file/article/sv\\_10\\_13a\\_03.pdf](http://armstat.am/file/article/sv_10_13a_03.pdf)

աճելու է՝ երիտասարդների՝ վարձու աշխատանքի անցնելու հետ կապված: 1974թ. հունվարի 1-ից հետո ծնվածները կազմում են 0-40 տարեկան քաղաքացիները: Եթե հաշվի առնենք, որ անձինք օրենքով սահմանված կարգով աշխատունակ են դառնում սկսած 15 տարեկանից, կարող ենք փաստել, որ ներկայումս կատարվող մոտ 25 մլրդ դրամ հատկացումները կատարվում են 16-40 տարեկանների, այսինքն՝ ընդհանուր առմամբ մոտ 25 տարբեր տարիքային խմբերի համար: Այսպես, կարող ենք փաստել, որ յուրաքանչյուր տարի կավելանա աշխատողների ևս մեկ տարիքային խումբ, այսինքն՝ միջինը տեղի կունենա պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակիցների աճ մասնակիցների ընդհանուր թվի 1/25-ի չափով, և դրան զուգահեռ, բյուջեի ծախսերը կավելանան նույն համամասնությամբ՝ ներկա ծախսերի մոտավորապես 1/25-ի չափով: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր տարի բյուջեի տվյալ ծախսային հոդվածը կավելանա մոտ 1 մլրդ դրամով և 25 տարի անց կկազմի տարեկան գրեթե 50 մլրդ դրամ: Այս թիվը ՀՀ 2013թ. պետական բյուջեի մոտ 5%-ն է կազմում, և դա բավական է հասկանալու, թե ինչպիսի ծախսային բեռ է դառնալու պարտադիր կուտակային համակարգը պետական բյուջեի համար:

Հարկ է նշել, որ դրա հետ մեկտեղ ողջ այս ժամանակահատվածում, այսինքն՝ առաջիկա 25 տարիներին պետական բյուջեի՝ կենսաթոշակների վճարներին ուղղված ծախսերը չեն նվազելու, ընդհակառակը, ըստ կառավարության ներկայացրած տվյալների ավելանալու են 50-ական թվականների ծնելիության շեշտակի աճի արդյունքում առաջիկա տարիներին կենսաթոշակառուների թվի և կյանքի միջին տևողության աճի պատճառով<sup>4</sup>: Այսինքն, պետական բյուջեի սոցիալական բեռի թոթափումը կսկսվի միայն 25 տարի անց, երբ պարտադիր կուտակային համակարգի առաջին մասնակիցները կսկսեն ստանալ իրենց կուտակած բազմաստիճան կենսաթոշակները: Հաջորդող տարիներին միայն բյուջեի կողմից տվյալ տարիքային խմբերին կենսաթոշակային հատկացումների գումարները կսկսեն շարունակաբար նվազել:

Հաշվի առնելով մեր կողմից իրականացված վերոնշյալ հաշվարկները և պետական բյուջեից կենսաթոշակային ֆոնդերին հատկացումների տարեցտարի սպասվող ավելացումները, հարց է առաջանում՝ ինչքանով է ժամանակին նշված օրենքի ընդունումը և կիրառումը, երբ օրինակ, 2014թ. պետական բյուջեի նախագծում 110,534,580.0 դրամ դեֆիցիտ է նախատեսվում, իսկ պետական բյուջեի ծախսերի շուրջ 29.2 –ը նախատեսվում է ուղղել սոցիալական պաշտպանության ծախսերին /364,361,632.5 դրամ 1,246,437,412. ընդհանուր ծախսերից/<sup>5</sup>:

Կարծում ենք, կուտակային կենսաթոշակների անցման հետևանքներից մեկը կարող է նաև լինել աղքատության մակարդակի աճը՝ սպառման կրճատման հաշվին: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ վարձու աշխատողների

<sup>4</sup> «Կենսաթոշակային բարեփոխումներ. Հանրային իրազեկում», Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն, Երևան, 2013

<sup>5</sup>[http://parliament.am/draft\\_docs5/K-353/K-353text\\_arajarkutyunerov.pdf](http://parliament.am/draft_docs5/K-353/K-353text_arajarkutyunerov.pdf)

23,4%-ը ներկայումս համարվում է աղքատ, իսկ 1,9 տոկոսը՝ ծայրահեղ աղքատ<sup>6</sup>: Աղքատների թվում վարձու աշխատողների թվաքանակը 22,4% է կազմում: Վստահաբար այս 23,4%-ի մոտ պարտադիր կուտակային վճարի ամբողջ գումարը նվազելու է սպառումից: Փաստորեն, պարտադիր կուտակային վճարի կատարման արդյունքում տվյալ անձանց սպառումն էլ ավելի կիջնի պարենային գծից, որի արդյունքում աղքատության խորությունը կմեծանա: Իսկ ընդհանուր առմամբ, անկախ այն հանգամանքից, թե բնակիչը իր սպառումից կկրճատի պարտադիր վճարի գումարը, թե խնայողություններից, բնակչության մոտ կավելանա սպառողական վարկերի պահանջարկը: Ստացվում է, որ բնակչությունը ստիպված է լինելու առավել բարձր տոկոսադրույքով փոխառել այն գումարները, որոնք ինքը պարտադիր կուտակային վճարի տեսքով փոխանցել է կուտակային ֆոնդեր:

Մեկ այլ կարևոր հարց է բնակչության ավանդների կրճատման խնդիրը: 2012թ. տարեվերջի դրությամբ Հայաստանում ներդրված ավանդների ընդհանուր մեծությունը կազմում է 638 348,0 մլն դրամ, ավանդի միջին չափը կազմում է 414213 դրամ<sup>7</sup>: 2011թ. նույն ցուցանիշը կազմել է 375 460 դրամ, այսինքն մեկ տարում այն աճել է միջինը 38783 դրամով: Սա նշանակում է ավանդատուի հաշվով 3231 դրամի աճ յուրաքանչյուր ամիս: Փաստորեն մեկ ավանդատուն յուրաքանչյուր ամիս միջին հաշվով ավանդի տեսքով խնայում է ընդամենը 3231 դրամ: Իսկ միջին աշխատավարձի հաշվարկով ամսական պարտադիր կուտակային վճարը կազմում է 7348 դրամ, ավելի քան երկու անգամ շատ: Ի դեպ, նույն ավանդների տեսքով խնայողություններ կատարելու դեպքում քաղաքացին կունենա ավելի մեծ եկամուտներ, քան կենսաթոշակային հիմնադրամում ներդրումներ կատարելիս, և բացի այդ կունենա տվյալ գումարը կարճաժամկետ տնօրինելու հնարավորություն:

Կարծում ենք, որ մեկ մասնավոր հետազոտության արդյունքների հիման վրա հնարավոր չէ կուտակային կենսաթոշակային համակարգի գործունակության և ներդրման հնարավոր ազդեցությունների մասին վերջնական եզրակացություն կազմել: Անհրաժեշտ է իրականացնել ոլորտի համապարփակ հետազոտություն և վերլուծություն, որը դժբախտաբար չի կատարվել կամ չի ներկայացվում պետական պատկան մարմինների կողմից: Ավելին, թե սույն հետազոտությամբ, թե տարբեր մասնագիտական այլ վերլուծությունների ու հետազոտությունների արդյունքներով փաստվում է, որ կան բազմաթիվ ռիսկեր, որը հարցականի տակ է դնում այս համակարգի կիրառման արդյունավետությունը, և կարծում ենք, պետական պատասխանատու մարմինները պետք է փորձեն պատասխանել մասնագետների կողմից առաջադրված հարցադրումներին, որն էլ իր հերթին կհանգեցնի համակարգի կիրառման հնարավոր ազդեցությունների բացահայտմանը և արդյունավետության բարձրացմանը: **Մեր կողմից փորձ է արվել առաձնացնել և հիմնավորել այնպիսի ռիսկերի առկայություն, ինչպիսիք են, աղքատության մակարդակի ավելացումը,**

<sup>6</sup> Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ԱՎԾ, Երևան 2013, էջ 56

<sup>7</sup> [http://armstat.am/file/article/armenia\\_13\\_5.pdf](http://armstat.am/file/article/armenia_13_5.pdf)

պետական բյուջեի ծախսային բեռի ավելացումը, միջոցների կուտակման և հետագա բաշխման մեխանիզմների անկատարությունը և ՀՀ-ից կապիտալի հնարավոր արտահոսքը: Սկզբունքորեն դեմ չլինելով կուտակային կենսաթոշակային համակարգին, կարծում ենք, որ համակարգի ներդրումը ժամանակավրեպ է, քանի որ, մինչ այժմ գիտական հետազոտությունների մակարդակում գնահատված չեն վերը նշված ռիսկերը, ավելին, շատ հետազոտություններ փաստում են համակարգի անկատարությունը, որն էլ իր հերթին թույլ է տալիս ենթադրել, որ համակարգի անխափան գործարկումը խիստ կասկածելի է: Հարկ է նշել, որ կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը հիմնականում հաջողություն է ունեցել զարգացած տնտեսությամբ երկրներում, որտեղ առկա է բնակչության բարձր կենսամակարդակ:

**Հետազոտական խումբ՝**

***Խմբի ղեկավար՝***

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոնի նախագահ

**ՂԱՐԻԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**  
**տնտեսագիտության թեկնածու**

***Խմբի անդամներ՝***

**ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ**  
**տնտեսագիտության թեկնածու**

**ԱՐՏԱՇԵՍ ԲՈՅԱԶՅԱՆ**  
**պատմական գիտությունների թեկնածու**

**ԿԱՐԵՆ ՌԱՖԱՅԵԼՅԱՆ**  
**տնտեսագետ**